

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու գահակալները՝ Նորին Սուրբ Օծուքին Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Նորին Սուրբ Օծուքին Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսպոկոս Մանուկեան՝ Պատրիարք Հայոց Երուսաղէմի, Ամենապատիւ Տ. Գարեգին Արքեպիսպոկոս Գազանեան՝ Պատրիարք Հայոց Թուրքիոյ, հրաւերովը Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Ս. Էջմիածնի Մայր Աթոռին մէջ, Մայիսի 6ին, 7ին եւ 9ին ունեցան խորհրդակցական երեք հանդիպումներ, որոնց ընթացքին անոնց բննարկման գլխաւոր առարկան հանդիսացաւ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հոչակման (301 թ.) 1700 ամեակի արժանավայել նշման, եւ պանծացման պարագան մեր Եկեղեցւոյ եւ ազգի կեանքին եւ համաշխարհային քրիստոնէութեան շրջագծին մէջ:

Խորհրդակցութեանց ընթացքին անոնք վեր հանեցին այն կենսական անհրաժեշտութիւնը որ 1700 ամեակը դառնայ աղբիւր Հայաստանեայց եկեղեցւոյ ներքին վերանորոգութեան, անոր հոգեւոր եւ ազգային առաքելութեան ուժեղացման եւ միանգամայն ըլլայ առիթ մը համաշխարհային եւ համաքրիստոնէական մակարդակի վրայ արժանապէս ներկայացնելու անոր կարեւորութիւնն ու արժէքը:

Առ այդ որոշեցին՝

ա. 2000-2001ը, երրորդ հազարամեակի առաջին տարին հոչակել Հանդիսական Տօնակատարութեան տարի, սկսելով 2000 թուի Ս. Էջմիածնի տօնէն մինչեւ 2001 թուի նոյն օրը:

բ. Կազմել Կեդրոնական Յանձնաժողով մը, բաղկացած նուիրապետական Աթոռներու ներկայացուցիչներէ: Եանձնաժողովը իր առաջին նիստը պիտի գումարէ յառաջիկայ աշնան (նախընտրաբար Սեպտեմբերի երկրորդ կէսին):

գ. Կեդրոնական Յանձնաժողովէն առաջացնել Գործադիր Մարմին մը որ պիտի ըլլայ գլխաւոր պատասխանատուն բոլոր ծրագիրներու մշակման եւ գործադրութեան, սկսեալ 1995էն մինչեւ 2001 թուականը:

Մայիսի 9ին, խորհրդակցական երրորդ նիստին ներկայ գտնուեցաւ Հայաստանի Հանրապետութեան փոխ-նախագահ Պրն. Գագիկ Յարութիւնեանը, որ հոգեւոր պետերուն ներկայացուց Հայաստանի Հանրապետութեան նախագահ Պրն. Լեւոն Տէր-Պետրոսեանի, Մայիս 1994 թուակիր հրամանագիրը:

Յետ խորհրդակցութեան որոշուեցաւ որ հայաստանեայց եկեղեցւոյ կազմելիք Կեդրոնական Յանձնաժողովն ու անկէ առաջանալիք Գործադիր Մարմինը եւ Հայաստանի Հանրապետութեան նախագահին կազմած Պետական Յանձնաժողովը սերտ գործակցութեամբ յառաջ տանին 1700-ամեակի հետ առնչուած աշխատանքները:

ԴԻԻԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ